# 267

1. Սարի վրա մի լույս խաչ կա,
Խաչի վրա՝ Հիսուս Արքան,
Կող ու ձեռքերն արյունլվա,
Եվ Ինձ համար, հենց ինձ
համար Նա կողբա:

2. Խաչի վրայից տեսավ Տերը
Սիրտս խոցած սուր նետերը,
Իր Արյունով Նա ինձ սրբեց,
Զղջումս տեսավ (2), մեղքերս
ներեց:

3. Թողնեմ աշխարհին ծանր
հոգսի,
Լինեմ զավակ Տեր Հիսուսի,
Քայլեմ ճամփան, չնայեմ ետ,
Խաչս է թեթև (2) Հիսուսի հետ:

4. Գնամ ճամփան բոբիկ
ոտքով,
Ես հարուստ եմ Տեր Հիսուսով,
Ի՞նչ եմ անում ունայն ոսկին,
Երբ ես ունեմ (2) Տեր Հիսուսին:

5. Սրտումս դրեց Հիսուս Արքան
Լույսի հոգին՝ զղջման, ներման,
Իմ Տերը՝ սեր սրտիս միջին,
Տերով սիրեմ (2) ես ամենքին:

6. Տեր Հիսուսով ճամփաս
հարթեմ,
Անձս Տիրոջս վստահեմ,
Գիտեմ՝ մի օր ես կգնամ,
Իմ Հիսուսին, իմ Հիսուսին
կմիանամ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025